ՀԱՎԵԼՎԱԾ ***N 3***
ՀՌՀ գլխավոր քարտուղարի
03.01.2022թ թիվ 2-Ա հրամանի

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

**1.** Ընդհանուր դրույթներ

**1.1** Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության պետի տեղակալ (ծածկագիրը՝ 44-20.1.1-Ղ4-1)

**1.2** Ենթակա և հաշվետու է

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի տեղակալը (այսուհետ՝ Վարչության պետի տեղակալ) անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

**1.3** Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետի տեղակալն անմիջականորեն ենթակա և հաշվետու աշխատողներ չունի:

**1.4** Փոխարինող պաշտոնի անվանումը

Վարչության պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Վարչության բաժինների պետերից մեկը:

**1.5** Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Իսահակյան 28

**2.** Պաշտոնի բնութագիրը

**2.1** Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Համակարգում է տեսալսողական ծրագրերի մոնիտորինգի սկզբունքների և մեթոդների մշակումը.
2. Համակարգում է մշտադիտարկման տվյալների վերլուծության մեթոդների մշակումը,
3. Համակարգում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում, ընդ որում Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով.
4. ամակարգում է մշտադիտարկման արդյունքում ստացված տվյալների ամփոփման և նախնական վերլուծության աշխատանքները.
5. Համակարգում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգի պահպանման մշտադիտարկումը.

6. Համակարգում է հեռարձակման և վերահաղորդման ընթացքում խախտումների, տեխնիկական ընդհատումների և վթարների հայտնաբերման ուղղությամբ աշխատանքները.
7. Համակարգում է տեսալսողական ծրագրերի տեսագրությունների, ձայնագրությունների և լիցենզիայի պայմանների, ինչպես նաև տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների, տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների կողմից տրամադրվող տեղեկատվության և ուղղակի դիտարկումների համադրման աշխատանքները.
8. Համակարգում է տեսալսողական ծրագրերի դիտարկման արդյունքների և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների համադրման աշխատանքները.
9. Համակարգում է Հեռարձակողների, ոչ գծային Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեության վերահսկման աշխատանքները.
10. Համակարգում է Հեռարձակողի կողմից սլոթի օգտագործման լիցենզավորման հայտին կցված լիցենզիայի պայմանների համապատասխանության ստուգումը.
11. Համակարգում է Հանրային հեռարձակողներում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերահսկողության իրականացնումը.
12. Համակարգում է տեսալսողական հաղորդումների տեխնիկական չափանիշների Կառավարության որոշմամբ սահմանված ստանդարտների համապատասխանության նկատմամբ վերահսկողության իրականացումը.
13. Համակարգում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների տեխնիկական միջոցների մոնիտորինգը.
14. Համակարգում է ցանցային օպերատորների կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին տեղեկությունների հաշվառումը և վերահսկողությունը.
15. Հաակարգում է տեսալսողական հաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների՝ ընտրանքային դիտարկման միջոցով, օրենսդրությանը և լիցենզիայի պահանջների համապատասխանության որոշման աշխատանքները.
16. Համակարգում է տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա Հեռարձակողների գործունեության վերահսկողության իրականացումը.
17. Համակարգում օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում ստուգումների և ուսումնասիրությունների իրականացումը.
18. Համակարգում է ուսումնասիրությունների և ստուգումների օրենսդրության պահանջների համապատասխանության և լիցենզիայի պայմանների կատարման մասին հաշվետվությունների պատրաստումը.
19. Համակարգում է ստացված տվյալների (ծրագրերի մշտադիտարկման, հաղորդումների հաշվառման մատյանների, տեսագրությունների և ձայնագրությունների, դիմում-բողոքների և այլն) հիման վրա վերլուծական աշխատանքների իրականացումը.
20. Համակարգում է Հանձնաժողովի գործունեությանը և լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների և վիճակագրական տվյալների ուսումնասիրման մեթոդաբանության կազմումը (մշակումը).
21. Համակարգում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և օպերատորների կողմից Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության վերլուծությունը.
22. Համակարգում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից մեդիա ոլորտի վիճակագրական աշխատանքների իրականացման նախագծումը, կազմակերպումը և վերահսկումը.
23. Համակարգում է դիստրիբյուտորների ներկայացված տեղեկատվության հիման վրա օտարերկրյա և հայերեն տեսալսողական ծրագրերի համամասնությունների վերլուծումը.
24. Համակարգում է Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված տեղեկատվության վերլուծության իրականացումը.
25. Համակարգում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների և դիստրիբյուտորների ներկայացված տեղեկատվության վիճակագրության վարումը.
26. Համակարգում է Հանձնաժողովի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից վիճակագրական տվյալների ստացման վերաբերյալ հարցաշարերի պատրաստումը և կատարելագործումը.
27. Համակարգում է տեսալսողական մեդիայի ոլորտի վիճակագրական տեղեկատվության ապահովումը՝ տեսալսողական ոլորտի քաղաքականության մշակման համար.

28. Համակարգում է տեսալսողական մեդիայի ոլորտի վիճակագրության պատճառ կատարման խոչընդոտների վերհանման աշխատանքների իրականացումը և լուծման առաջարկների ներկայացումը.
29. Ուսումնասիրում է տեսալսողական մեդիա ոլորտի միջազգային փորձը և ներկայացնում է համապատասխան առաջարկներ՝ Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքների բարելավման նպատակով.
30. Համակարգում է տեսալսողական մեդիա ոլորտին վերաբերվող օգտակար հղումների, հրապարակումների, գրքերի, գիտական աշխատությունների շտեմարանի վարումը։

Իրավունքները՝

- Վարչության պետից, Հանձնաժողովի կառուցվածքային այլ ստորաբաժանումներից, հեռարձակողներից, ցանցային օպերատորներից, տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորներից ստանալ անհրաժեշտ տեղեկություն, փաստաթղթեր, հաշվառման մատյանների տվյալներ, ձայնագրություններ և տեսագրություններ, տեխնիկական միջոցներ, մուտք գործել տեսաձայնագրման էլեկտրոնային համակարգ, մասնակցել Վարչության գործառույթներին առնչվող Հանձնաժողովի նիստերին, խորհրդակցություններին, կազմակերպել աշխատանքային քննարկումներ.
- Հանձնաժողովի նախագահից, գլխավոր քարտուղարից, Հանձնաժողովի կառուցվածքային այլ ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկություն, փաստաթղթեր, տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և օպերատորների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը.
- մեդիածառայություն մատուցողներից, օպերատորներից, Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն.
- անցկացնել հարցումներ լիցենզավորված մեդիածառայություն մատուցողներից շտեմարանների նյութերը թարմացնելու համար։

Պարտականությունները՝

- Ուսումնասիրել և ստուգել մշտադիտարկման արդյունքները, ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրությունները, հաշվետվությունները Հանրային հեռարձակողների ներկայացրած հաշվետվությունները.
- վերահսկել հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգի պահպանումը.
- ստուգել հեռարձակողների, ցանցային օպերատորների լիցենզային պայմանների տեխնիկական պահանջները.
- նախապատրաստել եզրակացություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, գրություններ.
- Վարչության պետին առաջարկություններ ներկայացնել տեսալսողական ծրագրերի մշտադիտարկման, ուսումնասիրությունների և ստուգումների կազմակերպման և անցկացման, Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ ներգրավելու վերաբերյալ.
- ուսումնասիրել և ստուգել տեղեկատվության և վիճակագրական տվյալների ուսումնասիրման մեթոդաբանության հիման վրա արված վիճակագրությունը և ներկայացնել Վարչության պետին.
- ուսումնասիրել և ստուգել տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների, դիստրիբյուտորների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա արված վիճակագրությունը և ներկայացնել Վարչության պետին.
- ուսումնասիրել և ստուգել տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից հեռարձակվող եթերի կառուցվածքի վիճակագրական տվյալները և ներկայացնել Վարչության պետին.
- ուսումնասիրել և ստուգել դիստրիբյուտորների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա օտարերկրյա և հայերեն տեսալսողական ծրագրերի համամասնությունները և կատարված դիտարկումները ներկայացնել Վարչության պետին.
- ուսումնասիրել և ստուգել Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա արված վիճակագրությունը և ներկայացնել Վարչության պետին.
- ստուգել հեռարձակված տեսալսողական ծրագրերի վերլուծության վերաբերյալ եզրակացությունները, տեղեկանքները, հաշվետվությունները և ներկայացնել Վարչության պետին.

- Վարչության պետին ներկայացնել տեսալսողական մեդիա ոլորտի միջազգային փորձը և ներկայացված առաջարկությունները և դիտարկումները.
- ստուգել հավաքագրված տեղեկատվության, հարցաշարերի, անցկացված հարցումների արդյունքների, ներկայացված առաջարկների հիման վրա կատարված վիճակագրությունը և Վարչության պետին ներկայացնել առաջարկներ՝ վիճակագրության պատշաճ կատարման խոչընդոտների վերհանման և տեսալսողական ոլորտի քաղաքականության մշակման համար:

**3.** Պաշտոնին ներկայացվող պահանջները

**3.1** Կրթությունը, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

**3.2** Մասնագիտական գիտելիքները

Ունի իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

**3.3** Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գրականության և արվեստի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

**3.4.**Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
5. Բողոքների բավարարում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

**4.** Կազմակերպական շրջանակը

**4.1** Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար

**4.2** Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում։

**4.3** Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն։

**4.4** Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում։

**4.5** Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից համակարգվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ։